

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:
Հայտատու՝

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի (2.1-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Ներքին աուդիտի բաժնի պետը՝

-պատրաստում, հաստատում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը, դրանց փոփոխությունները և ներկայացնում համայնքի ղեկավարի վավերացմանը,

- յուրաքանչյուր աուդիտի համար մշակում և հաստատում է աուդիտորական առաջադրանք,

- կազմում է ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորի վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգին և լիազոր մարմնի հաստատած ներքին աուդիտի մեթոդաբանությանը

- պատրաստում և համայնքի ղեկավարին ու ներքին աուդիտի կոմիտեին է ներկայացնում ներքին աուդիտի կանոնակարգի նախագիծը,

Ներքին աուդիտի բաժնի պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

- բարձրագույն կրթություն, համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամ աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, մինչև 2015թվականի հունվարի 1-ը պետական կամ համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ

- ՀՀ Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Ներքին

աուդիտի մասին>> ՀՀ օչենքների, ՀՀ կառավարության, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2013թվականի մարտի 26-ին ժամը 12-ին Մեծամորի քաղաքապետարանի վարչական շենքում հեռ. (0237) 3-44-41

Դիմումների ընդունման վերջին ժամկետն 2013 թվականի փետրվարի 20-ը ժամը 18-ին:

Անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

-տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինից բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին

- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին

- մեկ լուսանկար 3x4սմ չափի

-անձնագրի պատճենը

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի քաղաքապետարան և ՀՀ Արմավիրի մարզի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն հեռախոս (0237) 2-76-49, 2-07-70